ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **20.03.2018թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.*

Գալուստ Աղումյան «ԱՁ»-ի, «Տեխնոֆորում», «ՍԵԳ», «Կոմպմարկետ», «Զիգզագ», «Կոմպասս», «ԳԱԳԱՌ», «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ», «Ինո-Թեքնոլոջի», «Վանդիստ» և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊ ընկերությունների կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.*

Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները՝ «ԳԱԳԱՌ» և «Զիգզագ» ՍՊ ընկերությունները, հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությանը հիմնավորող, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. *Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.*

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. *«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.*

Հանձնաժողովը որոշեց՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «ԳԱԳԱՌ» ՍՊ ընկերությանը, իսկ 2-րդ չափաբաժնով՝ «Զիգզագ» ՍՊ ընկերությանը: Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10

(տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու է սահմանված կարգով ծանուցվելուց և պայմանագրի նախագիծը ներկայացվելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ — **Դ. Մարգարյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարիչ — **Ս. Գասպարյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ — **Ա. Մովսեսյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի վերահսկողության բաժնի պետ — **Ա. Դալլաքյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ — **Ք. Քոչարյան**